

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ

«ՀՀԿԳՄՍՆ ԴՄ-1100016» ծածկագրով անցկացվող մրցույթում ներկայացված յոթերորդ դասարանի
«-----» դասագրքի «Բովանդակային գնահատման փուլի»

Գնահատող հանձնաժողովի անդամ՝ նկարիչ-ձևավորող

Գնահատողի անունը, ազգանունը, հայրանունը _____

Բնութագրիչի համարը	Չափանիշ/բնութագրիչ	Տրվող միավորը՝ 0-3 *	նշումներ **
Թղթային դասագիրք			
	Չափանիշ 38. Դասագրքի արտաքին տեսքը (կազմ, էջերի բացվածք) համապատասխանում է գեղարվեստական ձևավորման պահանջներին	x	
38-1	Կիրառված պատկերները, տեխնիկան և ոճը համապատասխանում են սովորողների տարիքին և հետաքրքրություններին:		
38-2	Էջերի հագեցվածությունը, պատկերների և ուսումնական նյութի չափերը համապատասխանեցված են սովորողների տարիքին:		
38-3	Պատկերները կատարված են վառ և մաքուր երանգներով, հաշվի են առնված տարիքային առանձնահատկությունները:		
38-4	Պատկերները դյուրին են դիտելու համար, զերծ են ավելորդ, շեղող դետալներից:		
38-5	Դասագրքի կազմն ու էջերն ունեն նյութերի մատուցման ընդհանուր մոտեցում, գունային հարաբերությունների, ոճերի, լուսանկարների, վերատպությունների, գծապատկերների, բովանդակային հատվածների տարանջատման, հղումների տեղադրման, տառատեսակի ընտրության համապատասխանություն:		
38-6	Պատկերներն էջի նկատմամբ տեղադրված են ճիշտ, պահպանված է մասշտաբը:		

38-7	Ձևավորման մեջ առկա են ուսումնական նյութին համապատասխան շեշտադրումները: Պատկերներն արտացոլում են բուն թեման, հիմնական գաղափարը, բովանդակության կարևոր կետերը կամ համապատասխանում են լրացուցիչ առաջադրանքի պահանջին:		
38-8	Դասագրքի բոլոր պատկերները և նկարազարդումները նույնաոճ են, պահպանված են նույն մասշտաբները և նույն տառատեսակի գրությունները:		
38-9	Պատկերները բավարար չափով կոնտրաստային են, բարձր կետայնությամբ (300 pixel/inch), ֆոնը՝ հնարավորինս պարզ, ուղեկցող գրությունները՝ հստակ:		
	Չափանիշ 39. Դասագրքի պատկերային տեղեկույթը համապատասխանում է ուսումնական նյութին	X	
39-1	Պատկերազարդումները հավելում, լրացնում և լուսաբանում են տեքստում եղած տեղեկությունը, դիտողական դարձնում ասելիքը: Առկա են բոլոր անհրաժեշտ մեկնաբանությունները:		
39-2	Պատկերազարդումները տեղին են, ճիշտ են համադրված տեքստին, բովանդակության նկատմամբ համապատասխան տեղում են:		
39-3	Պատկերազարդումներն օգնում են ավելի պատկերավոր ու հիմնովին հիշել և հեշտ յուրացնել նյութը, համակարգում և կանոնակարգում են սովորողի միտքը:		
39-4	Էջի ձևավորման դեկորատիվ տարրերը /լուսանցքներ, լուսանցազարդեր, գլխատառեր, խորհրդանշական կամ հումորային պատկերներ և այլն/ չեն խանգարում ուսումնական նյութի և հիմնական պատկերազարդումների ընկալմանը՝ մնալով երկրորդ պլանում:		
	Չափանիշ 40. Դասագրքի պատկերազարդումը հանդիսանում է ուսումնական նյութի մատուցման մեթոդ	X	
40-1	Օգտագործված են գիտելիքի կազմակերպիչներ (դիագրամներ, գծապատկերներ և այլն), ուսումնագեղարվեստական այլ նյութերի (մշակութային օջախներ, ֆիլմեր, նկարներ, երաժշտություն, խաղեր) հղումներ: Այս դեպքում պատկերազարդումներն ու հղումներն ընտրված են որպես դասընթացի մաս:		

40-2	Օգտագործված են բովանդակության յուրացմանը նպաստող ոչ խոսքային միջոցներ (դիտողական, պատկերային, ձայնային, կինեսթետիկ և այլ), նաև առանձնահատուկ կարիքներով երեխաների համար:		
	Չափանիշ 41. Դասագրքի պատկերազարդումներն ունեն մանկավարժական գործառույթ	X	
41-1	Ուսումնագեղարվեստական նյութերի ընտրությունը և պատկերազարդումներն ապահովում են դասագրքի ճանաչողական, ուսուցանող, զարգացնող, նպատակները:		
41-2	Ուսումնագեղարվեստական նյութերի ընտրությունը և պատկերազարդումներն ապահովում են դասագրքի դաստիարակչական և գեղագիտական նպատակները:		
41-3	Ուսումնագեղարվեստական նյութերի ընտրությունը և պատկերազարդումները չեն սահմանափակում, զարգացնում են երևակայությունը, քննադատական մտածողություն, սովորողին մղում են ինքնակրթության և ստեղծագործական աշխատանքի:		
	Չափանիշ 42. Դասագրքի պատկերազարդումներն իրականացնում են գեղագիտական գործառույթ	X	
42-1	Անկախ ուսումնական առարկայի բնույթից՝ ուսումնագեղարվեստական նյութերի մեջ պահպանված են գեղագիտական սկզբունքները՝ նախապատվությունը տալով ազգայինին և դասականին: Դրանք բուն ուսումնական խնդրից բացի՝ լուծում են նաև սովորողի գեղագիտական ճաշակի ձևավորման և բավարարման խնդիր:		
42-2	Տեքստն ուղեկցող պատկերազարդումները գեղարվեստական արժեք ներկայացնող գեղանկարչական կամ գծանկարչական գործերի որակյալ, գունավոր վերատպություններ կամ լուսանկարներ են (նշված են հեղինակները):		
	Չափանիշ 43. Դասագրքի ուսումնագեղարվեստական նյութերը և պատկերազարդումներն ապահովում են կապն ազգային և համամարդկային արժեքների հետ	X	

43-1	Դասագիրքը ներառում է հայկական մշակույթին, ազգային կյանքին և ավանդույթներին վերաբերող նյութեր և պատկերազարդումներ՝ հաշվի առնելով տվյալ տարիքի սովորողների հետաքրքրությունների շրջանակը:		
43-2	Դասագիրքը ներառում է համամարդկային մշակութային արժեքներին վերաբերող նյութեր և պատկերազարդումներ՝ հաշվի առնելով սովորողների տարիքը և հետաքրքրությունները:		
43-3	Տարրական և միջին դպրոցի հայագիտական և արվեստի բնագավառի դասագրքերի ղեկորատիվ տարրեր (լուսանցազարդեր, շրջանակներ, գլխատառեր, խորհրդանշական պատկերներ և այլն) ընտրելիս նախապատվությունը տրված է ազգային նախշերին, խորհրդանիշերին, զարդագրերին, հեքիաթների և մուլտֆիլմերի հերոսների կերպարներին: Օտար լեզուների դասագրքերի ձևավորման մեջ առկա են տվյալ ժողովրդի ազգային մոտիվները:		
43-4	Ուսումնագեղարվեստական նյութերը նպաստում են ազգային և համամարդկային արժեքները հարգելու, պահպանելու և փոխանցելու դիրքորոշման ձևավորմանը: Ներկայացված են երաժշտության, կերպարվեստի թատրոնի, կինոյի և արվեստի այլ բնագավառների ազգային նկարագիր ունեցող և համաշխարհային մեծության գործիչների բարձրարժեք ստեղծագործություններ և կատարումներ:		
43-5	Ուսումնագեղարվեստական նյութերը զերծ են որևէ խտրականություն պարունակող, ՀՀ Սահմանադրության դրույթներին և բարոյական նորմերին չհամապատասխանող բովանդակությունից և պատկերներից:		
	Չափանիշ 44. Դասագրքում ապահովված են արվեստի և այլ բնագավառների միջառարկայական կապերը	X	
44-1	Առկա են ուսումնական տվյալ բնագավառի և արվեստի ոլորտի միջառարկայական կապերն ապահովող պատկերազարդումներ և նյութեր (վերատպություններ, երաժշտություն):		
44-2	Դասագրքում ներկայացված ուսումնական նյութին կից՝ որպես պատկերազարդում կիրառված արվեստի ստեղծագործությունները ապահովում են խաչվող հասկացությունների ընկալումը:		

44-3	Հայոց և օտար լեզուների դասագրքերում ներառված են արվեստի բնագավառից տարբեր նյութեր՝ ստեղծագործությունները նկարագրելու, մեկնաբանելու, վերլուծելու, դիտումից/ունկնդրումից ստացած զգացմունքները, տպավորություններն արտահայտելու կարողությունների զարգացմանը նպաստող առաջադրանքներ (տեքստեր, փոխադրության նյութեր, շարադրության թեմաներ, հետազոտական աշխատանքներ և այլն):		
44-4	Տվյալ առարկայի ուսումնասիրման շրջանակներում, առկա են ստեղծագործական բնույթի առաջադրանքների համար նախատեսված ուսումնագեղարվեստական նյութեր:		
Դասագրքի օգտագործման մեթոդական ուղեցույց			
	Չափանիշ 53. Պարզաբանված են դասագրքում ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի ընդգրկման նպատակներն ու դրանց օգտագործմանը վերաբերող հարցերը	X	
53-1	Դասագրքում առկա ուսումնական նյութերի և պատկերազարդման տարրերի վերաբերյալ պարզաբանված և հիմնավորված են դրանց յուրաքանչյուրի ընդգրկման անհրաժեշտությունը և նպատակը		
Դասագրքի բովանդակությունը լրացնող այլ ուսումնական նյութեր			
	Չափանիշ 61. Ուսումնական նյութերի ձևավորումն ապահովում է օգտագործման հարմարավետություն	X	
61-1	Ուսումնական նյութերի հերթականությունը, տրոհումները, վերնագրերը և նշանային համակարգը ներդաշնակ են տվյալ դասընթացի դասագրք(եր)ի հետ (դրանք զուգահեռ օգտագործելիս սովորողը հեշտ է կողմնորոշվում)		
61-2	Ուսումնական նյութերի ձևավորումը (չափս, գույն, ձայն, շարժունություն և այլն) կատարված է ճաշակով, պահպանված են գեղագիտական սկզբունքները, ինչը հաճելի է դարձնում այդ նյութերի օգտագործումը		

* 0 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշները բացակայում են
1 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշները մասամբ առկա են
2 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշները հիմնականում առկա են

3 միավոր, եթե բնութագրիչի հատկանիշներն ամբողջովին առկա են

** լրացվում է ըստ անրաժեշտության՝ գնահատման վերաբերյալ հատուկ մեկնաբանություն, բացատրություն ունենալու դեպքում: Ընդ որում, ծավալուն մեկնաբանությունները կարող են կատարվել առանձին A 4 ֆորմատի թղթի վրա՝ համապատասխան գրառում /հղում, տարբերանշում/ կատարելով «նշումներ» սյունակի համապատասխան տողում: Նշումների թերթիկում պարտադիր գրվում է գնահատողի անունը, ազգանունը, ստորագրությունը և կցվում է գնահատման թերթիկին:

Գնահատող՝

Անուն, Ազգանուն

ստորագրություն

«_____» _____ 2023 թ.